

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ 1

Է .

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐ

Ցամաքային կենդանեաց երևևայր :

Եւ դարուս մէջ՝ որ արարչագործու թեան չորրորդ և հինգերորդ օրերուն կը համեմատի, երևելի բանն եղաւ մթնոլորտին բոլորովին պարզիլը . որովհետեւ այնչափ պաղած էր երկիրս, որ չէ թէ միայն երկրիս վրայի նիւթերը չէր կրնար հալեցնել ու ցնդեցնել, հապա և ոչ գոլորշի դարձած թեթեւ մարմինները իրենց օգեղէն վիճակին մէջ պահել, որով անոնք ալ խտանալով երկրիս երեսը իջան, ասոնց մէջ ալ ամենէն առատն էր ջուրը, որ երկրիս խորը անհուն շտեմարաններու մէջ փակուեցաւ և անուշ ջրի մեծամեծ գետեր ու լճեր ձևացաւ :

Եւ անկ ըլլալով մթնոլորտն ալ շատ պայծառացաւ և աս առաջին անգամ արեւուն ճառագայթներն երկրիս վրայ ծածկեցին ու լուսաւորեցին . լուսոյ ու ջերմութեան կանոնաւորելովն ալ օրերն ու գիշերը աւելի որոշուեցան . աշխարհքիս կլիմաներն ու բարեխառնութիւնն ալ սահմանուեցաւ, և բոլոր աշխարհք նոր բոյսերով ու ծառերով զարդարուեցաւ, որոնք թէպէտ և առջի դարուն բուսոցը պէս աճեցուն ու յաղթահասակ չէին, բայց իրենց սնունդն ու կեանքը աւելի կանոնաւոր ու կարգաւորեալ էր :

Եւ դարուս սկիզբը ցամաքային կենդանիք գրեթէ չկային, հապա միայն ծովերու եզերքը բնակող երկակենցաղ զեռուններ, բայց ետքէն ստեղծուեցան եղէգնուտներու մեծամեծ չորքոտանիները . նոյն ժամանակն եղան նաև միջատներն, օձերն, ձկները, և ուրիշ անուշ ջրի գետերու ու լճերու մէջ բնա-

1 Տես երես 171 :

կող կենդանիները, որոնցմէ ոմանք հիմակուաններուն նման էն : Եւ անէն ետեւ ստեղծուեցան ցամաքային կենդանիները :

Եւ գիտնալով է որ աս դարուս մէջ կենդանեաց թէ տեսակը և թէ թիւը քիչ էր, իրենց գործարաններն ալ աւելի պարզ էին, տեսակները քանի որ շատ ցան, իրենց կազմութիւնն ալ աւելի կատարելագործուեցաւ :

Եւ արձեալ որչափ որ գործիւնոր մարմինները կը շատնային երկրիս վրայ, ընդհակառակն անգործարան մարմիններն ալ, ինչպէս նոր նոր ժայռեր ու հանքեր ձևանալն երթալով պակսեցաւ . ուստի երկրիս վրայ անասնոց երևնալէն ետեւ նոր ժայռեր նոր հանքեր ալ խիստ քիչ կ'երևնային . ուստի աս չորրորդ դարը աւելի անասնոց միացորդներով կ'որոշուի, քան թէ հանքաբանական յատկութիւններով :

Եւ որ ալ պատճառը աս էր որ երկրիս մակերևոյթը շատ հաստեցած ըլլալուն, ներքին նիւթին բռնութիւնն ալ պակսեր էր . մանաւանդ որ արդէն տակի հրային ժայռնոյն բռնութեան մղուելով ջրային հողերուն մէջէն ճամբայ ըրեր, ու երկրիս այլեայլ կողմերը ծխահաններ ու կանոնաւոր հրաբուխներ ձևացուցեր էր . որոնցմով ներքին բռնութիւնը կը մեղմանար, թէպէտ և դարձեալ չէին պակսեր ստէպ երկրաշարժներ, ու ծովերու ցամաք ու ցամաքի 'ի ծով փոխարկելներ . որոնցմէ առաջ կուգային աս դարուս Երրորդական ըսուած հողերը :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐ

Մարդաս ստեղծուիլը, ջրհեղեղին դիպումը :

Եւ դարս որ արարչագործութեան վեցերորդ օրուան կը համապատասխանէ, շատ անուանի եղաւ մարդուս ըստեղծագործութեամբը, որով վեցօրեայ արարչութեան վախճան եղաւ . և նոյն պէս դարձեալ համաշխարհական ջրհեղեղին սոսկալի դիպումով մարդկային սեռին սպառնալով :

Թէպէտ և հին ատենէն 'ի վեր ամէն ազգաց մէջ ծանօթ էր ջրհեղեղին դիպուածը , և անընդհատ աւանդութեամբ շարունակած , բայց եօթնևտասներորդ դարուն անհաւատ իմաստասերներէն ոմանք սուրբ գրոց և ամենայն ազգաց համաձայն վկայութիւնը բանի տեղ չդնելով , ըսին թէ Սովսիսի ընդհանրական ջրհեղեղը անհնարին առասպել մըն է , կամ թէ որ եղեր է ալ , այնպէս սոսկալի բան եղած պիտի չըլլայ , ինչպէս որ Սովսէս փութորցընելով կը պատմէ :

Բայց աս դիպուածիս ստուգութիւնը , ամենայն պարագայներով ինչպէս սուրբ գիրքը կը պատմէ , չէ թէ միայն ուրիշ ազգաց պատմութիւններէն ու յիշատակներէն յայտնի է , հապա նաև նոյն իսկ աշխարհքիս վրայի բնական երևոյթներէն ալ կ'իմացուի . և երկրաբաններու անխոնջ աշխատանքովը աս ճշմարտութիւնը հաստատուած է , թէ յիշուի երկրիս երեսը ընդհանրական ջրհեղեղով մը տակն ու վրայ եղած է , բաց 'ի ան ջրհեղեղներէն՝ որոնք որ առջի դարերուն մէջ ալ պատահած կը կարծուին ջրերու և ցամաքի տեղափոխութեամբը :

Եւ որովհետև մեր վախճանն ալ երկրաբանութիւնն է , ուստի աս կարծեաց միայն երկրաբանական ապացոյցներն հոս դնենք , որ են լեռներու , ձորերու ու նեղուցներու դիրքը , ցամաք երկիր այլ և այլ տեղուանք գտուած ծովային ժրմուկներու խեցիներու ու ձկանց ոսկորներուն դէզերը . ու տաք երկրի անասնոց կմախքը ցուրտ երկիրներու մէջ գտնուիլը . ասոնցմէ ետև քանի մը գլխաւոր առարկութիւններն ալ կը լուծենք :

Աշխարհքիս ամէն կողմը , բարձր լեռներու մէջ այնպիսի ձորեր կան , որ երկու կողերնին պատած է կոտրտած ու սեպացեալ ժայռերով . ասոնց միակերպ դիրքէն ու անհարթ ձևերէն կ'երևնայ թէ յանկարծական ջրերու յորդուութեամբ մը պատուեր ու բացուեր են ան ձորերը . և չէ թէ ատենօք գետ են եղեր ու ցամքեր . վասն զի ինչպէս որ

ըսինք բոլորովին ժայռուտ են և գետի սիկ ամենեւին չերևնար յատակնին :

Աշխարհքիս գլխաւոր նեղուցները ընդհանրապէս նոյն ուղղութիւնը ունին , և պզտի անցքով մը երկու մեծամեծ ծովերը իրարու հետ կը հաղորդեն , և երկու մօտ երկիրներ իրարմէ կը բաժնեն . ուստի երկրաբաններուն կարծիքն աս է թէ առաջ Ինկիլթէնուան Ֆրանսայի հետ , Սիկիլիան Կաթոլիի հետ , Սպանիան Իփրիկէի հետ , և Իմերիկան ալ Եսիայի հետ կպած էին . ու ջրհեղեղին ատեն ջրոց բռնութեանէն աս նեղ պարանոցները մաշեցան ու ձևացան Բալէի , Սեսիլիայի , Ղիպրաթարի և Պեհրինկայ նեղուցները , որով բոլոր մեծամեծ ծովերն ու Ովկիանոսները մէկմէկու հետ խառնուեցան :

Իսկ ընդհանրապէս և ուրիշ իմաստուն մարդիկ շատ քննութեամբ կը հաստատեն թէ Կոստանդնուպօլսոյ նեղուցն ալ Սև ծովուն Սիջերկրական ծով թափելէն առաջ եկած է . ինչպէս նաև յունաց մէջ աւանդութիւն էր թէ Պէնէոս գետին յորդելէն բաժնուեր են իրարմէ Ոսսա ու Ոլիմպոս լեռները , ինչպէս Երոզոտոս ալ աչքով ստուգեր է :

Շատ հաւանական է կարծել թէ կղզեաց խումբերն ալ ջրհեղեղին դիպուածէն առաջ եկած ըլլան . վասն զի ենթադրենք թէ ընդարձակ երկիր մը , ուր որ բարձր ու ցած լեռներ շատ կան , բոլոր ջրով ծածկուի ու ետքը քաշուի . ինչ կ'երևնայ . բայց եթէ ձորերը նոյնպէս ծովացեալ կը մնան , բարձր լեռները ցամաք երկիր կը ձևանան , իսկ ցածերուն միայն գլուխները դուրս մնալով կղզիներ կը ձևանան . աս կարծիքս աւելի կը հաստատուի երբ կը տեսնենք որ աս կղզիներու խումբը կամ թէ ըսենք արշիպելագոսները ընդհանրապէս ցամաք երկրի մօտ ծովեզերեայ տեղուանք են . ինչպէս Եւրոպայի հիւսիսային կողմի Հելլէնա , Իոֆֆոտէն , Իպրոմէն , Եթէթէնա ու Հեպրիտ կղզիները . հարաւային կողմը Զոնաստանի արշիպելագոսը . Հիւսիսային ու

հարաւային Մերիկային մէջ տեղն ալ մեծ ու փոքր Նդիլեանները :

Թափառական ըստած ժայռերն՝ ալ մեծ նշան են ջրհեղեղի . ասոնք ապառաժներու մեծամեծ կտորուանք են, որոնցմէ ոմանք ինչուան 300,000 հազարակրամ կը կշռեն և 1000 խորանարդ մետրոն զանգուած կ'ունենան, և գլորած ընկած կը գտուին լեռներու ստորոտները, ձորերու դաշտերու մէջ ու ծովեզերքները ինչպէս Պալմիկ ծովուն եզերքը, հարաւային Մերիկայի արեւմտեան կողմը և այլն . շատը բուն իրենց լեռնէն հեռուները ընկած, որոնք նոյն լեռանց կտոր ըլլալը իրենց զանգուածին բազադրութենէն ու գտնուած տեղերնուն գետնին հետ աննմանութենէն կ'իմացուի : Եւսոնց նման են նաև Վլորական խիճերը¹, որ առջիներուն պէս ժայռի կտոր են, բայց մանր ու երեսը գրեթէ մաշած ու ողորկած, որոնք լեռներու կողերը ու ծործորներու մէջ դիզած կը գտուին :

Լճաւորհիս ամենէն բարձր լեռներուն վրայ, և ծովէն շատ հեռու տեղուանք ժամուկներու, խեցիներու ու ծովային անասնոց ոսկրներու կոյտեր կը գտնուին . շատ անգամ կարծր կրային նիւթով մը պատած կամ իրենց պատկերները քարերու մէջ տպաւորած . աս բանս բնականապէս ուրիշ կերպով չենք կրնար բացատրել, բայց ըսելով թէ ատենօք սուրբ գրոց ըսածին պէս, ծովուն ջրերն ան աստիճան բարձրացեր են որ ամենէն բարձր լեռներն ալ ծածկեր են, և ետքը քաշուած ժամանակին ան անասուններէն շատը հոն դիզուել մնացեր են . կամ թէ հոն տեղուանքը ծով ըլլալով՝ յետոյ ջուրը քաշուել ուրիշ տեղ լեցուել է, և ան տեղուանքն ցամաք դարձեր են : Եւ տեսակ խեցիներու ու ծովային ձկներու ոսկորներ շատ կը գտուին Լյպեան, Լյպենինեան, Պիրենեան, Լնտ, Լտլաս ու Լրարատ լեռներուն վրայ :

Լճաւորհիս ամենէն ցուրտ երկիր-

ները՝ կը գտուին ամենէն տաք կողմերը բնակող կենդանեաց կմախներ . ինչպէս Սիպերիա ու Եսկիմուտ Եսիայի ու Միքիկէի փղերու ոսկորներ, Վերմանիա՝ Լիլոս գետի կոկորդիլոսներ, Լարոպայի աւազուտ հողերու մէջ ալ Մերիկայի ձկներ ու պալէնայի ոսկորներ . աս երեւոյթս երկրաբանք շատ կերպով ուղեր են մեկնել, բայց հաւանական կարծիքներն ասոնք են . մէյմը թէ երկրիս առջի ջերմութեամբ, որով ան ատեն ինչուան հիւսիսային ու հարաւային բևեռներն ալ տաք էին, ուստի աս անասունները ան կողմերն ալ կրնային բնակիլ . երկրորդը թէ գուցէ ասոնք ջրհեղեղով ան կողմերը քշուած ըլլան :

Լյսչափ ապացոյցներու դէմ չկրնալով դնել անհաւատները, ուղեցին ծանր կարծուած առարկութիւններով անոնց ուժը տկարացնել, որոնց գլխաւորներն ասոնք են .

ա . Բնդհանրական ջրհեղեղ անկարելի է որ ըլլայ, վասն զի 600 ոտք բարձրութենէն աւելի անձրև չկրնար գալ, եկածն ալ բարձր լեռներուն գագաթը չկրնար դիզուիլ ու կենալ . բնդհանուր հաշուով ալ կ'երեւնայ թէ ծովուն խորութիւնը 1000 ոտքէն աւելի չէ, իսկ արդ երկրիս վրայ շատ լեռներ կան որոնց բարձրութիւնը գէթ 10,000 ոտք է, ուրեմն տասը Սիկիանոս չէր բաւեր :

բ . Եոյսերը չէին կրնար այնչափ ատեն ջրերու մէջ ծփիլ ու չփճանալ . անկարելի էր դարձեալ որ ինչուան հեռու աշխարհքի կենդանիներն ալ գային՝ Լոյի տապանը մտնելու :

գ . Մերիկային հին աշխարհքէն բոլորովին զատուած ըլլալով չէին կրնար դարձեալ մարդիկ ու անասունք հոն անցնիլ ու բնակիլ :

Լոյի առարկութիւնը լուծելու համար, նախ գիտնալու է որ երկրիս երեսին $\frac{3}{4}$ մասը ջուր է . այսինքն երկրիս մակերեւոյթը ենթադրելով 1,000,734 ծովերը բռնած են, իսկ ցամաքի մասն է միայն 0,266 . երկրորդ էն բարձր լեռներն ալ որ մեր աչքին ահաւոր բա-

1 Գ.Բ. Blocs erratiques.

2 Գ.Բ. Cailloux roulés.

ներ կերևան, երկրիս ամբողջ զանգուածին հետ այնպէս կը համեմատին, ինչպէս նարնջի մը վրայ իր մանր կոծիծները . և յիրաւի . վասն զի երկրիս միջին տրամագիծն ըլլալով 3,000 լեքա, իսկ ամենէն բարձր լեռներուն գագաթը 2 լեքայի չհասնիր :

Եւ համեմատութիւններէս կերևնայ թէ միայն երկրիս վրայի եղած ջուրը բաւական էր բոլոր ցամաքը իր բարձր լեռներովը հանդերձ ծածկել . ուր թողունք հապա ան երկրիս ներսէն յորդած ջրերը, ու ան շոգի դարձած ջրերուն բազմութիւնը, որ Եստուած արարչութեան երկրորդ օրը զատելով երկինք հանեց, ու ջրհեղեղին ատեն յանձրեւ փոխարկեց, որոնց համար կ'ըսէ Սուրբ Գրքի « Սահանք երկնից բացան » : Պէ՛տանարտէն տը Սէն բիէր, կ'ըսէ թէ երկրիս ամբողջ ողողելու համար բաւական են հիւսիսային ու հարաւային բեւեռներուն և բարձր լեռանց գօտիներուն վրայ եղած սառոյցները : Սրեմն չէ թէ տասը քսան Սիւկիանոս, հապանակ մէկ հատն ալ միայն շատ էր աս ահաւոր պատուհասը ներգործելու :

Եւ պրէ՛տն անունով մէկը գործիք մը ունի շինած, որուն մէջ յայտնի կերևնայ թէ նոյն իսկ երկրիս խորերն եղած ջուրը բաւական էր համաշխարհական ջրհեղեղը ընելու, անոնց կարգէ դուրս կենդրոնախոյս զօրութիւն մը տալով, որ է ըսել երկրիս օրական շրջանը սաստկացնելով : Եւ գործիքը հողէ մէջը դատարկ գունտ մըն է, վրան գունտին համեմատ ելեկշնելով ու պզտի ծակերով . աս գունտը առանցքի մը վրայ առած և ուրիշ աւելի մեծկակ ապակէ գունտի մը համակերպոն զետեղած է . երբոր հիմա առջի հողէ գրնտին մէջ ջուր լեցնես, ու անոր արագ շարժում մը տաս պտըտցնես, կը տես որ ջուրը ծակտիքներէն ելլելով չէ թէ միայն բոլոր գունտը կողողէ, հապա նաև շարժման արագութեան համեմատ ուռելով ապակէ գունտն ալ կը լեցնէ . և շարժմանը դադրելուն պէս,

ջրերը նորէն իրենց տեղը կը քաշուին : Սրեմն ջրհեղեղին երևոյթն ալ ներգործելու համար, բաւական էր միայն երկրիս իր առանցքի վրայ ըրած շարժումը արագել :

Չ ուր ըսածդ բուսոց աւելի օգտակար է քան թէ փաստակար . յայտնի փորձն ալ կը ցուցնէ թէ ջրի տակ ալ մնալով բոյսերը կրնան աճիլ . ծառերը տարուան մը մէջ չեն փտտիր . հունտերն ալ հողէ դուրս ու հողի մէջ տարիներով իրենց բուսական զօրութիւնը կը պահեն . ինչպէս որ կը տեսնենք որ ջրհեղեղը լմննալէն անմիջապէս ետքը աղաւնին ձիթենիի ճիւղ գտաւ ու Նոյի բերաւ . դարձեալ շատ հաւանական է, որ Նոյ նահապետ իրեն հետ առած ըլլար նաև օգտակար բուսոց հունտերն ու տունկերը իրեն ու անասնոց պաշարներուն հետ :

Նոյն ատեն հայաստան կամ Սիջագետք՝ ուր որ տապանը շինուեցաւ, շատ աւելի տաք ըլլալով քան թէ հիմա, գրեթէ ամէն տաք երկիրներու անասունք ալ կրնային գտուիլ, ուստի հարկ չկար որ տարիներով ճամբայ ընէին տապանը մտնելու համար : Թէ որ Եստուած կենդանեաց տապանը երթալու ազդմունքն ըրաւ, և չէ թէ Նոյ զանոնք մէկիկ մէկիկ բռնեց տապանը դրաւ, նոյն ազդմունքը առաջուց ալ ընելու Եստուծոյ դժուարութիւն մը չէր : Դարձեալ կան անասունք որ ջրերու տակ ու օդ չեղած տեղուանք ալ կրնան բնակիլ . ինչպէս շատ անգամ քարեր ու ծառեր կտրած ժամանակ, մէջերնէն ելած են ողջ ողջ գորտեր, մողեսներ, սալամանդրեր, օձեր ու մկներ և ուրիշ ջրային կենդանիներ . շատ կենդանիք ալ կան որ ձմեռը բոլորովին թմրած ու անզգայ կը մնան, առանց բան ուտելու և օդ ծծելու : Դարձեալ հարկ մը չկայ կարծելու թէ Նոյ ամէն անասնոց ցեղերուն ամէն տեսակէն ալ առած ըլլայ . վասն զի շատ անգամ կը տեսնենք որ աս տեսակներուն զանազանութիւնը օգէն ջրէն ու բնակած երկրին յատկութիւններէն առաջ կու գայ . ինչպէս Պիւֆֆոն ալ կ'ըսէ

Թէ մէկ զոյգ շունէն ինչուան 36 տե-
սակ շուն առաջ կուգայ կամաց կամաց
փոխուելով :

Իսկ անասնոց ու մարդկանց նորէն
բոլոր երկիր ցրուելուն , ու մանաւանդ
Մերիկայ անցնելուն համար կ'ըսենք
Թէ նախ Լըրուպան , Լըիան ու Լըրի-
կէն իրարու կպած են . իսկ Լըիայի ու
Մերիկային մէջ եղած հիւսիսային նե-
ղուցը որ է Պէհրինկան , այնչափ նեղ
է ու մանր կզգլներով լեցուն որ մարդիկ
պզտի լաստով մըն ալ կրնային անցնիլ , և
երենց հետ հարկաւոր եղած անասուն-
ներն ալ տանիլ . ասոր յայտնի նշաննե-
րէն մէկն ալ ան է որ բուն Վամպլա-
քայի բնակչաց ու հիւսիսային Մերի-
կացոց դէմքերնին , բարբերնին , զգեստ-
նին մէկմէկու շատ նման է :

Իսկ անասունները իրենք իրենցմէ ալ
կրնային անցնիլ , որովհետեւ գիտենք Թէ
ասոնք առանց հոգնելու երկայն միջոց
կրնան լողալ : Երբնպէս կըսենք որ շատ
անգամ Մերիկայի անտառներէն խը-
լուած փայտերը , Խլանտայի ծովեզեր-
քը կրնետուին , նոյնպէս նաև շատ ան-
գամ մեծամեծ սառոյցներու հատոր-
ներ , վրանին հիւսիսային ճերմակ ար-
ջերով և ուրիշ կենդանիներով հոն կը
զարնուին :

Միջա ասոնք են ընդհանրական ջրհե-
ղեղին երկրաբանական պատճառները
որով կ'իմացուի Սովսէսի պատմածին
ճմարտութիւնը , և անհաւատ փիլիսո-
փայից ստուծիւնը : Բայց այսչափ հա-
ւանական պատճառներ ունենալէն ետեւ
ալ , պէտք է խոստովանինք որ նոյն իսկ
բնութեան ուժովը զբնութիւնը տակն
ու վրայ ընելու համար , նմային կարո-
ղութիւն մը հարկաւոր է . և Թէ ջրը-
հեղեղը իրաւցընէ աստուածային ար-
դարութեան ու ամենակարողութեան
սքանչելիքն է :

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ԹՈՒՅՐԱՅԵՐՈՒՄ . Զորի մը ու էշ մը մէկտեղ
ճամբայ կ'ընէին , էշը կը գանգաղէր իրեն բեռան
ծանրութեանը վրայդ . Զորին չկրնալով համբ-
րել անոր գանգառանացը գարձաւ ու ըսաւ . Ո՛վ
ծոյլ կենդանի , ինչ է այդ տրտունջդ . Թէ որ քու
կրած պարկերէդ մէկը ինծի տաս , իմ բեռս քու
կրնիդ կրկինը կ'ըլլայ . իսկ Թէ որ ես իմններէս
մէկը քեզի տամ , երկուքներուս ալ բեռը կը հա-
ւասարի : Արդ գիտնալու է Թէ քանիկական պարկ
էր իրենց բեռը :

Լուծումն . Որովհետեւ Թէ Զորին իր պարկերէն
մէկը իշուն որ տար , երկուքին բեռն ալ պիտի
հաւասարէր , ուրեմն յայտնի է որ երկուքին բե-
ռանց տարբերութիւնը երկուք է : Ուրեմն Թէ
որ Զորին իշուն պարկերէն մէկն առնէ , տարբե-
րութիւնը կ'ըլլայ չորս . որով ան առնէ Զորին ի-
շուն բեռանը կրկինը կ'ունենայ , որով Զորւոյն
բեռը կ'ըլլայ ութը պարկ իշունը չորս : Արդ Թէ
որ Զորին ան առնէ ինչ ետեւ իրեններէն մէկը իշուն
տայ՝ էշը կ'ունենայ հինկ իրեն կը մնայ եօթը պարկ :
Աս է ահա իրենց բեռանը չափը կամ պարկերուն
թիւը , և առաջարկութեան լուծումը , որն որ
ոտանաւոր դրուած կը գտուի յունարէն Նաղկա-
քաղի մը մէջ :

ԳԻՒՑ . Շատ անգամ կը պատահի որ մարմա-
րին քարէ , ալապատրէ ու յախճապակէ շի-
նուած արձաններն կամ անօթները կամ որ և ինչ
զարդերը անզգոյշ գիպուածով մը կը կոտորին , և
որչափ որ կոտորուածը պզտի մաս մը ըլլայ , այն-
չափ աւելի տգեղութիւն կը պատճառէ , ու նոյն
տեսակ բաներուն վրայ սէր ունեցողին սիրած կը
խշխշայ : Աս տեսակ կոտորած նիւթերը կայքնելու
համար անցեալները մէկ նոր կերպ մը սորվեցայ ,
որ ուզողը կրնայ փորձել : Ամանի մը մէջ կէսուի-
կէս կաթ ու քացախ լեցու ու թող որ լաւ մը
մակրդի ու մար կապէ , յետոյ զգուշութեամբ աս
մարը վրայէն առ , ու մնացած շիճուկին մէջ չորս
հինկ հաւկթի ճերմկուց զարկ ու լաւ մը յարէ .
յետոյ շիճուկին վրայ նուրբ մաղով մը չմարած կրի
բարակ փոշի ցանելով խառնէ , ինչուան որ խիտի
չափ թանձրանայ : Աս զանգուածով կրնաս կոտ-
րած մարմարը , ալապատրը , յախճապակը և այլ
պնակի ու խեցեղէն անօթները կայքնել , որն որ
գիւրաւ կը չորնայ , և կրակի ու ջրի ալ կը գիմա-
նայ :